

«ՅԱՅԼԻ» ՊԱՐԸ.

ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հոդվածը նվիրված է Չանգեզուրի տարածաշրջանին բնորոշ տղամարդկանց «Յայլի» պարին: Հոդվածի համար հիմք են ծառայել տարբեր ազգագրական ժողովածուներ, ինչպես նաև արխիվային անտիպ նյութեր: Այն կատարվել է ինչպես տոմարային տոների, այնպես էլ հարսանեկան ծեսերի ժամանակ: Հատկանշական է, որ պարին մասնակցել են միայն տղամարդիկ, կանանց արգելվում էր մասնակցել: Պարի ամենակարևոր առանձնահատկություններից մեկն է ցուցադրել ուժ, դիմացկունություն, արագաշարժության, ճկունության, կենտրոնացում: Տվյալ հոդվածի գիտական նորոյթը կայանում է նրանում, որ առաջին անգամ է դիտարկվում «Յայլի» տղամարդկանց պարի ծիսական բնույթն ու առանձնահատկությունը:

Բանալի բառեր` ազգագրություն, պար, Յայլի, Չանգեզուր:

Տղամարդկանց` զվարճալի կատակային բնույթի «Յայլի» խաղ-պարը բնորոշ է Արևելյան Հայաստանի շրջաններին, մասնավորապես Չանգեզուր, Ղարաբաղ, Նոյեմբերյան:

Տվյալ հոդվածում մեր խնդիրն է պար-խաղի համեմատական զուգահեռ անցկացնել այն տարածաշրջանների միջև, որտեղ կենցաղավարվել է տվյալ պարը, ապա դուրս բերել պարի ընթացքում կատարվող գործողությունների որոշ օրինաչափություններ: Նյութը վերլուծելու համար հիմք են ծառայել հիմնականում Երվանդ Լալայանի, Ժենյա Խաչատրյանի կողմից գրառած պարի նկարագրությունները, մեր կողմից կատարած դաշտային հետազոտությունները, ինչպես նաև արխիվային անտիպ նյութեր:

Տղամարդկանց մրցույթ-կատակային բնույթ կրող «Յայլի» խմբապարը կատարվել է ինչպես տոմարային տոների, այնպես էլ հարսանեկան ծեսերի ժամանակ: Հատկանշական է, որ այս պարում արգելվում էր կանանց մասնակցությունը: Պարում պահանջվում էր ուժ, դիմացկունություն, արագաշարժություն, ճկունություն, կենտրոնացում: Խաղ-պարում հաղթում է նա, ով մինչև վերջ ի վիճակի է լինում հաղթահարել պարագլխի կատարած գործողությունները¹:

Պարի անվանումը կապված է պարի կատարման վայրի հետ, որը, ժողովրդի բնորոշմամբ, «Յայլի» է կոչվում: «Յայլի» բառեզրի ստուգաբանության շուրջ տվյալներ հանդիպում է Լևոն Հարությունյանի` «Նշխարներ Արցախի բանահյուսություն» աշխատության մեջ. Այսպես` «Յալ»` 1. լեռնապարի ալիքվող մաս, 2. ալիքածև գծագրություն, 3. ալիք, ալիքում: «Յալի»` հայտնի պարախմբի ընդհանուր անունը, որը կոչվում է նաև սովորության պար, այսինքն` հայկական պար, փխբ.՝ խմբային պար²:

1 Ուշագրավ է, որ «Յայլի» անվան ներքո բազմաթիվ պարատեսակներ են հանդես գալիս և՛ մենապարեր, և՛ խմբապարեր, և՛ խաղ-պարեր:

2 Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 371:

Չանգեզուրի որոշ բնակավայրերում տղամարդկանց «Յայլի» խմբապարը կատարվում էր բազմաթիվ առիթներով, ինչպես նաև տոմարային տոների ժամանակ¹: Այսպես՝ Բարեկենդան տոնի հաջորդող կիրակի կամ երկուշաբթի օրերին, երբ ավարտված էր լինում «Խան փաշա» ծիսական խաղը, խաղի գլխավոր կերպարը՝ *փաշան* իր ընկերների հետ միասին խնջույք էր կազմակերպում: Երաժիշտների՝ *զուռնա-ղավալի* ուղեկցությամբ կենտ պար էին կատարում ձեռքներին ատրճանակ, դաշույն բռնած: Երբեմն ցանկանալով իրենց հնարամտությունը ցույց տալ՝ պարելու ընթացքում հրացանով կրակում էին օդ, իսկ ոմանք էլ՝ դաշույններն արագությամբ ոտների արանքով անցկացնում էին, ձգում վեր և դաշույնի երախակալից բռնում, ապա բերանն էին դնում և շարունակում այդպես պարել:

Պարը հետաքրքիր է դառնում, երբ կենտ պարին հաջորդում է «Յայլի» խմբապարը: Պարի մասնակիցներն ընտրում էին պարագլուխ, ապա միմյանց ձեռք բռնելով՝ շրջան կազմում: Պարի առաջնորդը հրամայում էր երաժիշտներին մտնել պարաշրջան և նվագել, ապա ձեռքն առնելով մի ճիպոտ՝ պարելու հրահանգ էր տալիս: Պարը սկզբում ունի բավականին դանդաղ տեմպ, որն աստիճանաբար արագանում է և վերջանում արագ թռիչքներով: Պարի ընթացքում պարագլուխը տարբեր շարժումներ է կատարում, օրինակ՝ ծափ տալիս և պագում, մասնակիցներից մեկի ականջը քաշում, տրեխը հանում, կենդանիների ձայներ արձակում: Մասնակիցները պարտավոր են արագորեն կրկնել պարագլխի հրահանգները, քանի որ սխալ կատարելու կամ ուշ արձագանքելու դեպքում պարագլուխը ճիպոտով մտրակում էր և հեռացնում պարաշարքից: Նույն այս նկարագրությամբ «Յայլի տալ» խաղ-պար գրանցվել է Էթնոպարագետ Ժենյա Խաչատրյանի կողմից Գորիսի Վերիշեն և Խոտ գյուղերից²:

Կանանց կատարմամբ այս պարի եզակի հաղորդություն հանդիպում է Տաթև գյուղում: Այն կատարվել է միայն կանանց մասնակցությամբ: Պարագլուխ կինը ինչ տեսակ խաղ կատարել է, մասնակից մյուս կանայք կրկնել են, եթե՝ ոչ, ապա նա իր ձեռքի ճիպոտով հարվածել է: Պարագլուխ կինը կատարել է «Կենդապար», «Լակզի» պար, «Միրզեի» և այլն: Թվարկած անուններից պարզ է, որ դրանք տարբերվել են տղամարդկանց կատարած գործողություններից³:

Ղարաղաղում⁴ տվյալ պարը կատարվում էր հարսանեկան ծեսի ժամանակ: «Յայլի» պարի բռնելածևը ճկույթներով էր, կառուցվածքը՝ կիսաշրջանաձև: Շատերը հանդես էին գալիս այս պարում դրա անչափ ծիծաղաշարժ լինելու պատճառով: Այստեղ «Յայլի» խմբապարն ուներ *օխտը փառդա*, այսինքն՝ յոթ պարեղանակի տարբերակ: *Յայլիբաշին*՝ պարագլուխը, խմբի հետ պարելով, ծիծաղաշարժ գործողություններ էր կատարում, և բոլոր մասնակիցները ամենայն խստությամբ պետք է ենթարկվեին ղեկավարին, կատարեին նրա կարգադրությունները և օրինակեին նրան: Պարից հեռանալը, խռովելը և նեղանալը համարվում էր կարգազանցություն: Այն առավել ծիծաղաշարժ

1 **Լալայեան Ե.**, Սիսիան, Ազգագրական հանդես, գ. III, 1898, էջ 252-253:

2 **Խաչատրյան Ժ.**, Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Ե., 2014, էջ 175:

3 Արարատ ամսագիր, կրօնական, պատմական, բանասիրական, պատմական, բարոյական, ԹԻԻ Ի.-տարի Դ., 1871, օգոստոս 31, էջ 231:

4 **Հովսեփյան Հ.**, Ղարաղաղի հայերը, հ. I, Ե., 2009, էջ 332-333:

Եր դառնում, երբ հաջողվում էր պարի մեջ ներգրավել պարի կանոններից ու գործողություններից անտեղյակ ու անծանոթ մարդկանց: Նրանք հաճախ լինում էին հեռավոր գյուղերից կամ քաղաքից եկած հյուրեր: Պարագլուխը կարգապահության համար ձեռքին ունենում էր մտրակ և չենթարկվողներին կամ իր կատարած գործողությունը անմիջապես չվերատադրողին մտրակում էր ու տուգանքի ենթարկում (հավաքված տուգանքով պարի մասնակիցները վերջում խնջույք էին կազմակերպում): Բերենք որոշ օրինակներ զվարճալի խմբապարհից. պարագլուխը գրպանից թաշկինակ էր հանում, անմիջապես պետք է բլուրը թաշկինակ հանեին և կախեին բերանից, թաշկինակ չունեցողները տուգանվում էին: Այնուհետև պարբաշին պարի ընթացքում շալակում էր տաստասներկու տարեկան տղայի, ապա՝ կսմթում, աղաղակ առաջացնում, պարի մասնակիցները պետք է օրինակեին, այլապես՝ կտուգանվեին: Պարբաշին բարձր հայտարարում էր, «Երեխաները եթե աղմկում են, ուրեմն միջատ կա վրաները, հարկավոր է ստուգել»: Բլուր մասնակիցները սկսում էին երեխաների տաբատները հանել, նրանք ամոթից ավելի էին աղմկում, տիրում էր համընդհանուր ծիծաղ: Այնուհետև թողնելով երեխաներին՝ շարունակում էին պարը, ապա ծալապատիկ նստում, ծաղրում պառավ կանանց, թե ինչպես են նիրհելով բուրդ գզում, ճախարակ մանում, գուլպա գործում: Պարի վերջում պարագլուխը սկսում էր հանել անդրավարտիքը: Նրանք, ովքեր գիտեին նրա կատակները, նախապես երկրորդ անդրավարտիքն էին հագած լինում, իսկ ովքեր անտեղյակ էին, հանում էին անդրավարտիքը կամ էլ տուգանվում:

«Յայլին» պարսկահայերի մեջ նույնպես կենցաղավարվել է. պարզապես այստեղ այն անվանում էին «Շառաբունի»¹: Չանգեգուրի, Ղարադաղի նկարագրված գործողությունները գրեթե կրկնվում են պարսկահայերի մեջ, բայց նաև հանդիպում է այլ զվարճալի գործողություններ նույնպես: «Շառաբունի» պարում էին հայ և թուրք երիտասարդները միասին: Շարքի բլուր անդամները պարտավորված էին լիովին հնազանդվել իրենց պարագլխին: Չունաչիները պարաշրջանի կենտրոնում կանգնած նվագում էին պարի եղանակը: Նվագողների, հանդիսականների, պարողների աչքերը սևեռված էին պարագլխի վրա: Պարաշարքի սլանալու ընթացքում՝ երբեմն պարբաշին ճիպոտով հարվածում էր պարաշարքին անզգուշորեն մոտ կանգնած որևէ մեկին: Պարողներից շատերը նույնպես կրկնում էին նրա կատարածները: Հանդիսականները խուճապահար փախչում էին տարբեր կողմեր՝ աղմուկ բարձրացնելով: Մեծ ու փոքր, այր ու կին ներողամտությամբ էին ընկալում զվարճաբանական պար-խաղը: Այնուհետև մի քանի պտույտ անելով՝ պարբաշին իր չուխայի թևն էր հանում, նույնը կատարում էին պարի մասնակիցները: Ապա պարագլուխը հանկարծակիորեն մի երեխայի թևքից բռնելով, շալակում էր և իր ճիպոտով հարվածում մասնակիցներին, որ նրանք նույնպես երեխաներ գրկեն: Բայց որտեղից գտնեն, երբ շուրջ բլուրը մեծ կանայք էին: Պարողները ստիպված շալակում էին պառավ կանանց երիտասարդ կանանց, երիտասարդ աղջիկների: Բազմությունը աշխույժության և ծիծաղի մեջ էր գտնվում, երեխաները լացում էին, պառավ կանայք ծիծաղում էին, իսկ գունդան ավելի ակտիվ էր նվագում: Այդ ընդհանուր աղմուկի մեջ պարբաշին պառկում էր

1 **Քաջբերունի**, Ճանապարհորդական նկատողություններ, Ե., 2003, էջ 159-161:

գետնին և սկսում երեխային համբուրել, մյուսները նույնպես պետք է կրկնեին՝ պառկեցնելով գետնին պառավին, աղջկան և համբուրեին մի քանի անգամ: Ընդհանուր ծիծաղի ժամանակ, երբ որևէ ծեր մարդ էր անզգուշաբար մոտենում պարագլխին, վերջինս թողնելով երեխային՝ ատամներով կախվում էր ծերունու մորուքից, մյուսները ևս պետք է գտնեին ծերունի և ատամներով կախվեին մորուքներից: Ծերունիների մազերն ատամների արանքներում պահելով՝ մի քանի պտույտ էին պարում, որից հետո պարագլուխը բերանից թափում էր մազերը և հանկարծակի հարձակվում և ատամներով բռնում էր մեկ այլ մարդու հագուստից. պարի մասնակիցները պետք է նույնը կատարեին:

Անդրադառնալով «Յայլի» խմբապարի կատարողական կազմին՝ վերն արդեն նկատեցինք, որ պարին մասնակցում էին այլազգի ներկայացուցիչներ նույնպես: Այդօրինակ վկայություն հանդիպում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում Ա. Իսայեյանի ֆոնդում: Նկարագրությունների համաձայն՝ Շուշի քաղաքի Ղումլուղ կոչվող տարածքի բերդի մոտ հայերը և ադրբեջանցիները հավաքվում էին «Յայլի» պարելու¹: Պարը կատարվում էր նույն սկզբունքով ինչպես վերը նկարագրված է²: Պարում պարտադիր համարվող բաղադրիչն էր երեխա գրկելը, տաբատ հանելը, մի ոտքի վրա թռչկոտելով պարելը: Հարկ է նշել, որ այս պարի եղանակը գրանցվել է Մ. Մուրադյանի և Ս. Դավթյանի կողմից գիտարշավի ընթացքում Ղարաբաղի Հադրութի շրջանի Մեծ Մագրա գյուղում³: Ինչպես նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահպանվում է Արուսյակ Սահակյանի և Սարգիս Հարությունյանի կողմից ծայնագրված այս պարի եղանակը՝ զուռնադիլի նվագակցությամբ, որը գրանցվել է Նոյեմբերյան կատարած գիտարշավի ժամանակ 1961թ.: Այս գիտարշավին մասնակցել են նաև էթնոպարագետներ՝ Ժենյա Խաչատրյանը և Էմմա Պետրոսյանը⁴: Նոյեմբերյանի շրջանում այս պարը կոչվում էր «Չոփի տալ»: Պարի ընթացքում մասնակիցները պետք է կրկնեին պարագլխի շարժումները և գործողությունները: Այստեղ պարագլուխը աստիճանաբար հանում էր հագուստի մասերը՝ գլխարկ, տաբատ, վերնաշապիկ և այլն: Ով չէր կատարում պարագլխի գործողությունները, մտարկով հարված

1 Իսրայելյան Ա. Հ., ՀԱԻ ԱԲԱ, մաս 2, N 48, թ. 54-55:

2 Ուշագրավ է, որ Ղարաբաղում Հղլացավ (խղլացավ) կանացի հիվանդությունը բուժում էին Յայլի եղանակ նվագելով: Սա այն հիվանդությունն է, երբ կինն անընդմեջ պարելու, շարժվելու ցանկություն ունի: Բուժման եղանակը լինում է հետևյալ կերպ. ընդարձակ սենյակում զուռնա նվագող երաժիշտները հնչեցնում են Յայլի եղանակը, երկու տղամարդ, հղլացավով հիվանդ կնոջը պարելով, հրում են միմյանց կողմ այնքան ժամանակ, մինչև հիվանդն ուժասպառ հատակին է ընկնում: Նշվում է նաև, որ հիվանդն դրանից հետո, օրեր շարունակ պառկած է մնում անկողնում մարմնի սուր ցավերով. [տե՛ս Իսրայելյան Ա., Լեռնային Ղարաբաղի Փիրգամալ, Նախիջևանիկ գյուղերի ազգագրական նյութեր, Նշվ. աշխ]: Խղլացավ բուժման պարին անդրադարձել է ազգագրագետ Ժենյա Խաչատրյանը. [տե՛ս Խաչատրյան Ժ., Խաղլացավի (դիվահարության) բուժումը պարով, Լրաբեր հասարակական գիտությունների, 10 (454), 1980, էջ 89-96]:

3 Նոտագրությունը տե՛ս Ծիսական պարը հայոց մեջ, Գիտաժողովի նյութեր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ե., 2002, էջ 108-109:

4 «Չոփի» պարի վերլուծությունները ամփոփվել են հետևյալ աշխատություններում: Տե՛ս Խաչատրյան Ժ., Ծիսական պարը հայոց հավատալիքների համատեքստում, Ե., 2014, էջ 173-176: Петросян Э., Миф об Иннane в свете армянской ритуальной традиции, современные проблемы армянского, русского и зарубежного литературоведения (вопросы филологии. Выпуск 2), Ե., 2006, с. 298.

եր ստանում¹: Հատկանշական է, որ նմանատիպ պար «Չոմփի տալ» անվամբ հանդիպում է նաև Դաշկեսանի շրջանի Բանանց գյուղում²:

Ղարաբաղի տարածաշրջանի Շուշի քաղաքում հավաքվում էին *Քերծի կլոխ* կոչվող տարածքում: Պարագլխի օգնականն իր ձեռքին ունենում էր ճիպոտ, և ով ճշգրիտ չէր կատարում պարագլխի շարժումները, վերջինս ճիպոտով հարվածում էր: Օրինակ՝ գրպանից հանում էր թաշկինակ, արջի նման քայլում, որևէ հանդիսականի երեխային վերցնում գիրկը, անդրավարտիքը հանում: Ով չէր կատարում հատկապես վերջին գործողությունը՝ դուրս էր գալիս խաղից և պատժվում:

Տվյալ պարագայում դժվար է որոշել «Յայլի» տղամարդկանց պարի ազգային պատկանելությունը, քանի որ երկու ժողովուրդներն էլ տոնակատարությունների, հարսանեկան խնջույքների ժամանակ այն պարում էին:

«Յայլիին» բնորոշ գործողություններով պարեր հանդիպում են այլ բնակավայրերում՝ տարբեր անուններով և պարեղանակներով: Նոյեմբերյանի շրջանում «Չոփի»³, Մարտունիում, Աշտարակում՝ «Ղազ-ղազի»⁴, Հրազդանում՝ «Ղազ պար»⁵, Արարատի մարզի Վերին Աղբաշ գյուղում՝ «Կազե կազ»⁶, Ուջանում՝ «Արաբոյի պար»⁷: Ինչպես, օրինակ, Հրազդանի Լեռնանիստ գյուղում պարագլուխը նմանակում էր սագի, բոլոր մասնակիցները պետք է կրկնեին, օրինակ՝ հանում էր կոշիկը, հետո՝ տաքատը, ով չէր կատարում կամ ուշացնում էր, պարագլխի օգնականը մտրակով հարվածում էր և պարաշարքից հեռացնում: Ուջանում պարագլուխը, բացի թվարկված գործողություններից, կատարում էր նաև *չաթմա* զարկել (թռիչքներով կքանստել) որոշակի քանակով, ով չէր կատարում կամ կատարում էր քիչ քանակով, մտրակում և պարից հեռացնում էր:

Հոդվածն ամփոփենք որոշ եզրահանգումներով.

1. «Յայլի» խաղ-պարին հատուկ է մրցույթային բնույթը, որտեղ ցուցադրվում է տղամարդկանց դիմացկունությունը, հնարամտությունն ու արագ կողմնորոշվելու հատկանիշները:

2. Խաղ-պարի հիմնական գործողությունները, որոնք գրեթե նույնությամբ հանդիպում են վերը նկարագրված տարածաշրջաններում հետևյալն են՝ կենդանիների նմանակելը, երեխա գրկելը, տաքատ հանելը, ինչպես նաև ամբողջությամբ հագուստի մասերը, աղջիկներին համբուրելը, պառավ կանանց նմանակելը:

3. Կանանց արգելվում էր այս զվարճալի պարին մասնակցել, քանի որ թվարկված գործողությունները հակառակ սեռի վարքագծին հատուկ չէին:

1 **Խաչատրյան ժ.**, նշվ. աշխ., էջ 174:

2 **Շամամյան Ն.**, Պարերը Բանանցի հարսանեկան ծիսաշարում, Գարդմանի և Շիրվանի հայրության պատմա-մշակութային ավանդները: Հանրապետական գիտաժողով: Ձեկուցումներ և զեկուցումների դրույթներ: Ապրիլ 29-30, Ե., 2016, էջ 142-145:

3 ՀՍՍՀ Նոյեմբերյանի շրջան գիտարշավ, 1961թ., դեկ. Դ. Վարդումյան, ՀԱԻ տուփ 13, լուսանկարներ, N 2158-8:

4 **Շամամյան Ն.**, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև ԴՄՆ), Արագածոտնի մարզ, գյուղ Օշական, Գեղարքունիքի մարզ, գյուղ Ձորագյուղ, 2012:

5 **Շամամյան Ն.**, ԴՄՆ, Կոտայքի մարզ, գյուղ Լեռնանիստ, 2011:

6 **Շամամյան Ն.**, ԴՄՆ, Արարատի մարզ, գյուղ Աղբաշ, 2010:

7 **Շամամյան Ն.**, ԴՄՆ, Արագածոտնի մարզ, գյուղ Ուջան, 2010:

Միայն մեկ փաստ է հանդիպում Տաթև գյուղում, որտեղ միայն կանայք էին պարում, այն էլ ոչ տղամարդկանց բնորոշ գործողություններով:

4. «Յայլի», ինչպես վերը նշվեց, բացի Ղարաբաղ, Չանգեզուր, Ղարադաղ տարածաշրջաններից, կատարվում է նաև Նոյեմբերյան, Օշական, Ուջան, Լեռնանիստ, Չորագյուղ բնակավայրերում նույնպես: Պարի բնույթը նույնն է, պարեղանակները՝ տարբեր, ինչի արդյունքում այս պարն ունի մի քանի տեղական պարեղանակի տարբերակներ:

5. «Յայլի» խմբապարի թվարկված անվանումներից (ըստ տարածաշրջանների) ելնելով՝ առավել հստակ է դառնում, որ տվյալ պարանունները ոչ միշտ են համապատասխան եղել միևնույն կառուցվածքն ու պարածնն ունեցող պարին: Դրանք հաճախ պայմանական են: Երբեմն նույնանման պարածնը կարող է ունենալ բազմաթիվ անուններ տարբեր ազգագրական շրջաններում:

«YAYLI» DANCE. ATTEMPT OF HISTORIC-ETHNOGRAPHICAL STUDY - NARINE SHAMAMYAN - This article is devoted to men dance «Yayli» of Eastern Armenia. The article is based on different ethnographical collections, as well as on unpublished archive materials. «Yayli» have been danced during the festivities of calendar, as well in wedding ceremonies. Its remarkable that were participated only men, women were not participating in dance. The most important feature of «Yayli» dance is demonstrated power, endurance, quickness, flexibility, concentration. The scientific contribution of this article is that are completely described the «Yayli» dance of men, their nature and specific.

Key words: Ethnography, dance, Yayli, Zangezur.

ПЛЯСКА «ЯЙЛИ». ОПЫТ ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИЙ ИСЛЕДОВАНИИ - НАРИНЕ ШАМАМЯН - Статья посвящена мужской пляске «Яйли» которой характеризуется Восточной Армении. Статья основанна на различных этнографических книгах, а также неопубликованный архивных материалах. Пляска «Яйли» исполнялся не только календарних праздниках, но и свадебных цремоний. Примечательно, что в этом пляске участвовали только мужчины, женщинам было запрещено плясать. Одна из самых важных особенностей танца - показать силу, выносливость, ловкость, гибкость, концентрацию. Научная новизна этой статьии заключается в том, что в первый раз наблюдается ритуальный характер и особенность мужского танца «Яйли».

Ключевые слова: Етнография, пляска, Яйли, Зангезур.